ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-հուլիս)





2023թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 1 տրլն 286. 5 մլրդ դրամ, ինչը 198.4 մլրդ դրամով կամ 18.2%-ով ավել է 2022թ. և 694.6 մլրդ դրամով կամ 117.4 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից ավել է 431.4 մլրդ դրամով կամ 50.5 %-ով: 2023թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 884.4 մլրդ դրամ, ինչը 301.4 մլրդ դրամով կամ 51.7 %-ով ավել է 2022թ. և 541.5 մլրդ դրամով կամ 157.9 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից ավել է 479 մլրդ դրամով կամ 118.2%-ով: 2023թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 402.1 մլրդ դրամ,ինչը 103 մլրդ դրամով կամ 20.4 %-ով պակաս է 2022թ. և 153.1 մլրդ դրամով կամ 61.5 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից պակաս է 47.5 մլրդ դրամով կամ 10.6%-ով:

2023թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 3 մլրդ 302.4 մլն դոլար, ինչը 864.7 մլն դոլարով կամ 35.5 %-ով ավել է 2022թ. և 2 մլրդ 155.9 մլն դոլարով կամ 188 % -ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից ավել է 1 մլրդ 432.4 մլն դոլարով կամ 188 %-ով: 2023թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 2 մլրդ 271.4 մլն դոլար, ինչը 963 մլն դոլարով կամ 73.6 %-ով ավել է 2022թ. և 1 մլրդ 608.5 մլն դոլարով կամ 242.6%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից ավել է 1 մլրդ 395.3 մլն դոլարով կամ 159.3%-ով: 2023 թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 1 մլրդ 31 մլն դոլար, ինչը 98.3 մլն դոլարով կամ 8.7%-ով պակաս է 2022թ. և 547.4 մլն դոլարով կամ 113.2 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից ավել է 37.1 մլն դոլարով կամ 3.7%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**